Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/43874/02/23**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի դեկտեմբերի <<22>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «Ռաֆ–Օջախ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝00456403,*գրանցման համարը՝ 278.110.59942, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112, էլ. փոստ՝ rafojakh@gmail.com, այսուհետ նաև՝ Հայցվոր)* ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի *(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13ա, էլ. փոստ՝ finansakan2013@mail.ru, այսուհետ նաև՝ Պատասխանող)*՝ «Ռաֆ–Օջախ» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Ղազարյանի 27.11.2023 թվականի թիվ 382–Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր ««Ռաֆ–Օջախ» ՍՊ ընկերության տնօրենը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի ՝ «Ռաֆ–Օջախ» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Ղազարյանի 27.11.2023 թվականի թիվ 382–Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին :

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են հանձնվել 19.12.2023 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/43874/02/23 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024 թվականի փետրվարի 06-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ